ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ

Փետրվարի 18-ին Երևանում տեղի ունեցավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահության ընդլայնված նիստը: Քննարկվեցին խաղաղության Համաշխարհային խորհրդի Ստոկհոլմի սեսիայի արդյունքները, խաղաղության ֆոնդի ընդլայնման և խաղաղության պաշտպանության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանսի հրավիրման հարցերը:

Ստոկհոլմի սեսիայի արդյունքների մասին հաղորդումով հանդես եկավ խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի պատասխանատու քարտուղար Հ. Խաչատրյանը:

Նիստում ելույթ ունեցավ նաև Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ը, որը խոսեց խաղաղության ամրապնդման գործում Հայ Եկեղեցու դերի մասին:

Ելույթ ունեցան նաև Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրի տեղակալ Ա. Շահինյանը, Ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի նախագահ Հ. Այվազյանը, Քաղաքական և գիտական գիտելիքների տարածման ընկերության նախագահի տեղակալ Խ. Դանիելյանը, խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի նախագահ, գրող Ն. Զարյանը, «Հայաստանի աշխատավորություն» ամսագրի խմբագիր Ս. Երիցյանը, վաստակավոր ուսուցչուհի Ս. Առամելյանը:

Նիստը որոշեց ընթացիկ տարվա մայիս ամսին հրավիրել խաղաղության պաշտպանության կողմնակիցների ռեսպուբլիկական կոնֆերանս՝ նվիրված ընդհանուր և լիակատար զինաթափման հարցին: